ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՅՆ ՍՈՎԵՏԻ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՆԻՍՏԸ

Լեռնային Ղարաբաղի հարցի, անոր յառաջբերման, արծարծման թերութիւններուն, հայ ժողովուրդի տնտեսաքաղաքական կարողականութեան, ՍՍՀՄ ղեկավարութեան մօտ հարցին պատկերացման եւ այլ պարագաներու յստակացման համար, կը շարունակենք մեր ընթերցողներուն ներկայացնել ՍՍՀՄ գերագոյն սովետի 18 Յուլիսի նիստին նկարագրականը:

Ստորեւ կը սկսինք հրատարակել շուրջ եօթուկէս ժամ տեւած այս նիստին կարծիքներու փոխանակման նուիրուած նկարագրականը: Խ.

*

Այնուհետեւ սկսուեց մտքերի փոխանակութիւն:

Մտքերի փոխանակութեան ժամանակ առաջինը ձայն խնդրեց ՍՍՀՄ գերագոյն սովետի նախագահութեան նախագահի տեղակալ, ՌՍՖՍՀ գերագոյն սովետի նախագահութեան նախագահ Վ. Պ. Օռլովը: Նա ընդգծեց, որ ՍՍՀՄ սահմանադրութիւնը երաշխաւորում է երկրի բոլոր ժողովուրդների եւ ազգութիւնների իրաւահաւասարութիւնն ու գերիշխանութիւնը: Յատկապէս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերաբերեալ ՍՄԿԿ կենտրոնական կոմիտէի եւ ՍՍՀՄ մինիստրների խորհրդի, ինչպէս նաեւ ՍՍՀՄ գերագոյն սովետի նախագահութեան ընդունած որոշումները բոլոր պայմանները ստեղծել են որպէսզի ազատուելով յոյզերից ու չերտանատուածքներից, կենտրոնանանք Լեռնային Ղարաբաղի խնդիրների շինիչ լուծման եւ նրան առընչուող իրավիճակի առողջացման վրայ:

Սակայն այդ շրջանում ըստ էութեան ընտրուած է ճնշման ուղի, հակասահմանադրական ուղի, որը հակասում է վերակառուցման ոգուն եւ ուղուն:

Գործադուլները, որ այսօր տեղի են ունենում Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում, ընդգծեց հռետորը, ցաւալի են անդրադառնում երկրի այլ անկիւնների արտադրական խմբակների կենսագործունէութեան վրայ, խփում են բանուոր մարդու գրպանին:

Մ. Ս. Կորպաչով. *Սա արդէն, գիտէք, լուրջ բան է: Ոմանք օգտուել են իրաւ խնդիրներից, որոնք հարկաւոր է լուծել, իրենց օգտին են ծառայեցնում մարդկանց շարժումը, որոնք անհանգստացած են նրանով, թէ ինչպէս այսուհետեւ ապրեն: Խօսքը մեր մարդկանց, մեր ժողովուրդների համատեղ կեանքի մասին է: Ուստի դուք ճիշդ էք ասում:*

Վ. Պ. Օռլով. *Այսպէս է դասաւորուում իրադրութիւնը:*

Մ. Ս. Կորպաչով. *Իմ անունով շատ հեռագրեր են եկել, թէ ինչ է տեղի ունենում երկրում, հապա ո՞ւր է կառավարութիւնը, ո՞ւր է կուսակցութեան կենտրոնական կոմիտէն: Մարդիկ հարց են տալիս. ինչպէ՞ս կարելի է Լեռնային Ղարաբաղում ապրել, չաշխատելով Փետրուարից: Չէ՞ որ մենք աշխատավարձով ենք ապրում:*

Վ. Պ. Օռլով. *Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից Հայաստանի կազմը փոխանցելու հարցի լուծման խնդրանքով ՍՍՀՄ գերագոյն սովետին դիմելը, առանց Ադրբեջանական ՍՍՀ գերագոյն սովետի համաձայնութեան, հակասում է սահմանադրութիւնը: Չէ՞ որ թէ՛ 1924 թուականի, թէ՛ 1936 թուականի, թէ՛ 1977 թուականի, որով մենք առաջնորդւում ենք, սահմանադրութիւններում ըստ էութեան միեւնոյն գրառումն է այն մասին, որ միութենական հանրապետութեան հողը չի կարող փոփոխուել առանց նրա համաձայնութեան: Միութենական հանրապետութիւնների միջեւ անցնող սահմանները կարող են փոխուել համապատասխան հանրապետութիւնների փոխադարձ համաձայնութեամբ, որոնք ենթական են ՍՍՀ Միութեան հաստատմանը: Այդ սկզբունքը համաժողովրդական պաշտպանութեան էր արժանացել սահմանադրութեան նախագիծը քննարկելիս, այդ թւում նաեւ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի աշխատաւորների կողմից: Այն ըստ էութեան, բոլոր միութենական հանրապետութիւնների իրաւահաւասարութեան եւ ինքնիշխանութեան այսօրուայ կարեւորագոյն երաշխիքներից մէկն է:*

Կարծում եմ, որ մենք այստեղ բախուել ենք դեմոկրատական իրաւունքները հակադեմոկրատական, հակասահմանադրական նպատակներով օգտագործելու փորձի: Դեմոկրատիայի նման չարաշահումները արմատապէս հակասում են այսօրուայ խնդիրներին, վերակառուցման խնդիրներին, հակասում են սովետական ժողովրդի շահերին:

ՍՍՀՄ գերագոյն սովետի նախագահութեան անդամ, ՍՄԿԿ կենտկոմի քաղբիւրոյի անդամ, Ուկրաինայի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Վ. Վ. Շչերբիցկին նշեց, որ քննարկուող հարցը չի կարող անտարբեր թողնել ոչ մի սովետական մարդու, անկախ այն բանից, թէ ինչ ազգութեան է նա պատկանում: Ուկրաինայի ժողովուրդը խորապէս մտահոգուած է Լեռնային Ղարաբաղի եւ նրան առնչուող իրադարձութիւններից: Քանզի այն ինչ տեղի է ունենում, մեր ընդհանուր ցաւն է եւ տագնապը մեր սոցիալիստական պետութեան համար:

Հայաստանի եւ Ադրբեջանի աշխատաւորներին, ինչպէս բոլոր սովետական մարդկանց, անկասկած, հարկաւոր են հանգիստ, նորմալ մարդկային կեանք եւ իրաւակարգի պահպանութիւն եւ ոչ թէ փոխադարձ երկպառակութիւններ, որոնց մենք հիմա հասել ենք: Ինչպէս մեզ թւում է, ստեղծուած իրադրութիւնից դուրս գալու համար շինիչ հիմք է դրուած Մ. Ս. Կորպաչովի յայտնի դիմումի մէջ եւ այնուհետեւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման վերաբերեալ ՍՄԿԿ կենտրոնական կոմիտէի եւ ՍՍՀՄ մինիստրների խորհրդի ընդունած որոշման մէջ:

Ի հարկէ, տեղի ունեցող երեւոյթների պատճառները, ինչպէս մենք կարծում ենք, կուտակուել են տարիներով, այդ թւում եղել են պատճառներ, որոնք կապուած են ինտերնացիոնալ դաստիարակութեան մէջ եղած բացթողման եւ բնակչութեան ազգային-մշակութային պահանջմունքների բաւարարման ու սոցիալ-տնտեսական զարգացման թերութիւնների հետ:

Միեւնոյն ժամանակ աւելի ու աւելի ակնյայտ է դառնում, որ տեղի ունեցող իրադարձութիւնների ետեւում նկատւում են նաեւ անձանց դիրքաւորումն ու գործունէութիւնները, ովքեր ձգտում են բորբոքել ազգային եսամոլութիւն, շիկացնել յոյզերը, դրանց տալով աւելի ու աւելի յանդուգն հակահասարակական եւ նոյնիսկ, այժմ կարելի է ասել, հակասովետական բնոյթ: Չէ՞ որ բանը հասաւ օդանաւակայանի գրաւմանը: Բանը հասաւ այն պատճառով, որ որոշ ծայրայեղականներ Հայաստանի քաղաքացիներին կոչ են անում, ինչպէս «Փրաւդայ»ում էր գրուած, «ինքնուրոյնաբար» փոխել կուսակցական, տնտեսական եւ սովետական մարմինների ղեկավար կազմը: Դա, ի հարկէ, բանի նման չէ: Ծայրայեղական տարրերի նման անպատասխանատու, ապօրինի գործողութիւնները, նկատի ունենալով օդանաւակայանի գրաւումից յետոյ եղած հետեւանքները, բնականաբար, վրդովմունք են առաջացնում: Թէ՛ քիեւցիների շրջանում, ես գիտեմ, եւ թէ Տոնպասում քննադատութիւն է արւում մեր հասցէին, գերագոյն սովետի նախագահութեան հասցէին. ինչո՞ւ նման արարքներ վճռականօրէն չեն կասեցւում: Մարդիկ գտնում են, որ այլեւս նման վիճակը չի կարելի հանդուրժել:

Այժմ, ըստ երեւոյթին, մեզ բոլորիս համար շատ կարեւոր է հաշուի առնել, որ հասարակութիւնը վճռապէս անջատուի չմտածուած գործողութիւններից ու տարբեր կարգի նացիոնալիստական, ծայրայեղական տրամադրութիւններից, բացայայտօրէն ոչ սոցիալիստական տարրերից, որոնք դեմոկրատական լոզունգներով քողարկում են իրենց ըստ էութեան քայքայիչ, վերակառուցմանը հակառակ նպատակները:

Մենք իրաւունք չունենք մոռանալու, որ արտասահմանում ոմանք ջանում են հնարաւոր ամէն ինչ անել, որպէսզի այժմ Անդրկովկասում տեղի ունեցող դէպքերը որքան հնարաւոր է լայն չափեր ընդունեն մեր երկրի այլ շրջաններում: Կարծում եմ, որ Ադրբեջանի ու Հայաստանի ղեկավարներն այդ բանը լաւ են պատկերացնում:

Ցաւօք, ինչպէս ինձ թւում է, տեղական մարմինները արդէն երկար ժամանակ չեն կարողանում քոնֆլիքթի *լուծման արդիւնաւէտ ուղիներ գտնել եւ ետ են մնում իրադարձութիւններից, ինչպէս որ դա ընդունեց Հայաստանի կոմկուսի կենտկոմի նիստը, եւ, ըստ էութեան, այժմ, ինձ թւում է, յատկապէս Հայաստանում նրանք չեն վերահսկում իրադրութիւնը: Բանը հասել է նրան, որ Լեռնային Ղարաբաղի մարզային սովետի նստաշրջանը ընդունել է Ադրբեջանական հանրապետութեան կազմից դուրս գալու հակասահմանադրական որոշում: Ինչպէ՞ս կարող էին այս բանը թոյլ տալ կոմունիստները, կուսակցութեան մարզային կոմիտէն՝ սա ինձ միանգամայն անհասկանալի է:*

Այսպիսով, իրադրութիւնը ծայրայեղօրէն շիկացել է, եւ այլեւս այս վիճակը հանդուրժել չի կարելի: Հռետորն այնուհետեւ բերեց վիճակագրական տուեալներ, որոնք վկայում են, որ Հայկական ՍՍՀից ապրանքների եւ ամբողջացման իրերի մատակարարումների ձախողման հետեւանքով միայն Ուկրաինայի մեքենաշինական ձեռնարկութիւնները Յուլիսին չեն տայ մօտ 200 միլիոն ռուբլու արտադրանք: Վերելակների ամբողջացման հանգոյցների թերամատակարարումների պատճառով ամբողջ հանրապետութիւնում արդէն չի յանձնուել մօտ հինգ հազար բնակարան: Սա շօշափում է ամբողջ երկրի շատ խմբակների շահերը, ազդում հոգեբանական իրադրութեան վրայ: Սա մեծապէս դուրս է գալիս տեղային քոնֆլիքթի *շրջանակներից:*

Մենք այդ հանրապետութիւնների ընկերներին խնդրում ենք հասկանալ ստեղծուած իրավիճակը:

Մենք 19րդ կուսկոնֆերանսում խնդիր դրեցինք ստեղծելու սոցիալիստական իրաւական պետութիւն: Իրաւական ռեֆորմի հարց ենք առաջադրում: Դա մեզ պարտաւորեցնում է արդէն **այսօր** *լրջօրէն մտածել, որ իրաւական նորմաներին չեն համապատասխանում շատ բաներ, ինչ այժմ տեղի է ունենում այդ շրջանում: Կարծում եմ, որ մենք պարտաւոր ենք, հասունացած ռէալ խնդիրը տարբերել ամբողջ օտարամուտից, իսկ որտեղ հարկաւոր է՝ իշխանութիւն գործադրել: Չի կարելի թոյլ տալ, որ ոեւէ մէկը մեր դեմոկրատիան մեկնաբանի որպէս ամենաթողութիւն եւ անպատժելիութիւն: Այլապէս նման իրավիճակներ նորից ու նորից կ'առաջանան: Ըստ երեւոյթին, հարկաւոր է վճռականօրէն դիմել աշխատաւորական խմբակների՝ իրենց վարկաբեկած ղեկավարների փոխման, յատկապէս նրանց, ովքեր երկար ժամանակ գործադուլ են անում: Ի՞նչ ղեկավարներ են դրանք: Բացի այդ, բոլոր գործադուլաւորներն էլ պէտք է յստակօրէն պատկերացնեն, որ պայմանագրային մատակարարումների ծրագրային առաջադրանքների ձախողման համար ստիպուած կը լինեն պատասխան տալ լրջօրէն:*

Այժմ, երբ երկիրը վերակառուցման վճռական փուլ է թեւակոխել, առանձնապէս անհրաժեշտ է գործողութիւնների միանութիւն, բոլոր ազգերի ու ազգութիւնների սերտ համախմբուածութիւն: Ուստի այնքան կարեւոր է վեր կանգնել փոխադարձ վիրաւորանքներից ու պահանջներից, չոտնահարելով ոչ մէկի իրաւունքները: Մ. Ս. Կորպաչովը շարունակ այս միտքն է ընդգծում, չոտնահարելով ոչ մէկի շահերը, նախ եւ առաջ ելնել բոլոր ժողովուրդների բարձրագոյն շահերից, մեր միասնական միութենական պետութեան շահերից: Ցաւօք, Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների այսօրուայ ելոյթներում ես այդ բանը չնկատեցի: Եւ, ինձ թւում է, պէտք է նրանց յիշեցնել, որ երկրի սահմանադրութեան նկատմամբ յարգանքը հարկաւոր է դրսեւորել ոչ միայն ճառերում, այլեւ, առաջին հերթին, գործերում ու արարքներում:

Յայտնի է որ սահմանադրութեան 78րդ յօդուածի համաձայն, այս մասին արդէն այսօր ասուեց, միութենական հանրապետութիւնների միջեւ սահմանները կարող են փոփոխուել միայն նրանց փոխադարձ համաձայնութեամբ: Այժմ այդպիսի համաձայնութիւն չկայ: Ուստի սահմանադրութեան դրոյթը թէ՛ կողմնորոշիչ է, թէ՛ հիմք որոշման ընդունման համար: Ելնելով ներկայումս գործող օրէնքներից, ինձ անհնարին է թւում, ինչպէս որ դա առաջարկւում է նշել ՍՍՀՄ գերագոյն սովետի նախագահութեան որոշման նախագծում, որոշում ընդունել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կեցոյթի փոփոխման մասին

Ելոյթ ունեցողն ընդգծեց, որ այսօր առանձնապէս կարեւոր է, որ իսկական սովետական հայրենասէրները, իսկ նրանք բացարձակ մեծամասնութիւն են կազմում թէ՛ Հայաստանում, թէ՛ Ադրբեջանում, եւ առաջին հերթին կոմունիստները, կոմերիտականները, գործնականում իրենց բոլոր գործողութիւններով ցոյց տան ինտերնացիոնալիզմի իսկական օրինակ, յիշելով լենինեան այն պատգամը, որ միշտ եւ ամէն ինչում հարկաւոր է ինտերնացիոնալ շահերը բարձր դասել ազգային նեղ ըմբռնուող շահերից:

(Շար. 5)